# Գույների տոն



Սիրելի փոքրիկ, քեզ և ընկերներիդ հրավիրում ենք մասնակցել այս գեղեցիկ տոնին:
Փորձեք միասին ինքներդ ստեղծել կախարդական մի քաղաք:
* Յուրաքանչյուրը թող նկարի տուն, աշտարակ կամ ամրոց: Զգուշորեն կտրեք այդ նկարները և սոսնձեք այն մի մեծ թղթի վրա: Կստացվի քաղաքը:
* Այժմ ամեն մեկդ նկարեք տարբեր թռչուն-կենդանիներ, կտրատեք դրանք և էլի սոսնձեք մեծ թղթի վրա: Այդպես ձեր հեքիաթային քաղաքում կհայտնվեն բնակիչներ, ինչպես ամենաիսկական կախարդական հեքիաթում:
Էլ ի՞նչ է պակասում ձեր հեքիաթում, մտածեք ինքներդ ու ընկերներով լրացրեք պատկերը:
Խնդրեք մայրիկին կամ հայրիկին, եղբորը կամ քրոջը լուսանկարել այդ մեծ նկարը, լուսանկարը ուղարկել admin@poqrik.am հասցեով: Եվ ձեր հեքիաթային քաղաքների նկարները կտեղադրենք այս էջում: